

Առարկա՝ Providence ծրագրի ֆինանսական օժանդակության (բարեգործական հսկողության) քաղաքականություն – Հարավային Կալիֆոռնիա	Ապահովագրի համարը. PSJH RCM 002 LAMKT	
Բաժանմունք. Եկամուտների փաստաթղթաշրջանառության կառավարում	<input checked="" type="checkbox"/> Նոր <input type="checkbox"/> Փոփոխված <input type="checkbox"/> Վերանայված	Ամսաթիվ. 3/22/2019 թ.
Նախագծի հովանավոր. Եկամուտների փաստաթղթաշրջանառության բաժնի ԱՓՆ, գլխավոր մասնագետ՝ Կիմբերլի Սուլլիվան	Ապահովագրությունը իրականացնողը. Vicki Head, հիվանդների ընդունելության բաժնի տնօրեն	
Հաստատված է՝ Providence տնօրենների խորհրդի կողմից	Իրականացման ամսաթիվը. 5/1/2019 թ.	

Providence-ը կաթոլիկական ոչ առևտրային առողջապահական կազմակերպություն է, որը առաջնորդվում է բոլորին ծառայելու իր առաքելությամբ, հատկապես աղքատ և խոցելի խավին, կարեկցանքի, արժանապատվության, արդարության, գերազանցության և ամբողջականության իր Հիմնական արժեքներով և հավատքով, որ առողջապահությունը մարդու իրավունքն է: Providence-ի յուրաքանչյուր հիվանդանոցի փիլիսոփայությունն ու նպատակն է ապահովել, որպեսզի բժշկական անհրաժեշտ բուժօգնության ծառայությունները հասանելի լինեն այն համայնքներում, որտեղ մենք ծառայում ենք, անկախ նրանց վճարելու ունակությունից:

ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.

Այս քաղաքականությունը տարածվում է Լոս Անջելեսի Հարավային Կալիֆոռնիա նահանգի Providence («Providence») բոլոր հիվանդանոցների և Լոս Անջելես վարչաշրջանի Providence հիվանդանոցների կողմից տրամադրվող բոլոր անհրաժեշտ արտակարգ, հրատապ և այլ բժշկական անհրաժեշտ ծառայությունների վրա (բացառությամբ փորձարարական կամ հետազոտական նպատակներով կատարվող հսկողության): Այս քաղաքականությամբ կանոնակարգվող բոլոր Providence հիվանդանոցների ցանկը կարող էք գտնել Ընդգրկված հաստատությունների ցանկի Հավելված Ա-ում:

Այս քաղաքականությունը պետք է մեկնաբանվի 1986 թ. Ներքին եկամուտների մասին օրենսգրքի 501(r) բաժնի փոփոխությունների համաձայն և Կալիֆոռնիայի Providence հիվանդանոցների, Կալիֆոռնիայի Առողջապահության և անվտանգության օրենսգրքում նշված Հիվանդանոցի կիրառելի գնային քաղաքականության (Բաժիններ 127400-127446) համաձայն: Այդ օրենքների դրույթների և սույն քաղաքականության միջև հակասությունների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է այդ օրենքներին:

ՆՊՍՏԱԿԸ՝

Այս քաղաքականությունը նպատակ է հետապնդում ապահովել ֆինանսական օժանդակության (բարեգործական հսկողության) տրամադրման արդարացի, ոչ խտրական, արդյունավետ և միասնական մեթոդ այն իրավասու անձանց, ովքեր չեն կարող ամբողջությամբ կամ մասամբ վճարել բժշկական օգնության և այլ հիվանդանոցային ծառայությունների համար, որոնք մատուցվում են Providence հիվանդանոցների կողմից:

Այս քաղաքականության նպատակն է համապատասխանել բոլոր դաշնային, նահանգային և տեղական օրենքներին: Այս քաղաքականությունը և դրանցում նշված ֆինանսական օժանդակության ծրագրերը կազմում են պաշտոնական Ֆինանսական օժանդակության քաղաքականությունը («ՖՕՔ») և Շտապ բուժօգնության քաղաքականությունը Providence-ին պատկանող, իր կողմից վարձակալվող կամ գործարկվող յուրաքանչյուր հիվանդանոցի համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Providence-ը անվճար կամ նվազեցված գներով հիվանդանոցային ծառայություններ է տրամադրելու ցածր եկամուտներ ունեցող, ապահովագրություն չունեցող և քիչ գումարով ապահովագրված իրավասու հիվանդներին, ինչպես նաև չափազանց շատ բժշկական ծախսերով հիվանդներին, ում կենսամակարդակը հավասար կամ ցածր է 350% Դաշնային աղքատության մակարդակից («FPL»), երբ ծառայությունների համար վճարելու կարողությունը արգելք է հանդիսանում անհրաժեշտ շտապ բուժօգնության և հիվանդանոցային հսկողության այլ ծառայություններից օգտվելու համար և չկա որևէ այլընտրանքային ապահովագրության աղբյուր: Հիվանդները այս օգնությունից օգտվելու համար պետք է համապատասխանեն սույն քաղաքականությունում նկարագրված իրավասության պահանջներին:

Providence-ի հիվանդանոցները՝ հատուկ արտակարգ իրավիճակների բաժինների հետ մեկտեղ, առանց խտրականության տրամադրելու են հսկողություն շտապ բուժօգնության իրավիճակներում (Շտապ բուժօգնության և աշխատանքի մասին օրենքի համաձայն)՝ առկա հնարավորություններին համապատասխան, անկախ այն հանգամանքից՝ արդյոք անհատը ֆինանսական օժանդակության իրավունք ունի, թե ոչ: Ֆինանսական օժանդակություն տրամադրելու որոշումներ կայացնելիս Providence-ը չպետք է խտրականություն դնի, հիմնվելով՝ տարիքի, ռասայի, մաշկի գույնի, դավանանքի, էթնիկ, կրոնական, ազգային պատկանելության, ընտանեկան կարգավիճակի, սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության կամ արտահայտման, հաշմանդամության, վետերանի կամ զինվորական կարգավիճակի, կամ որևէ այլ հիմունքների վրա՝ արգելված դաշնային, նահանգային կամ տեղական օրենքով:

Providence հիվանդանոցները կկատարեն հիվանդի հետազոտում և կմատուցեն կայունացնող բուժման ծառայություններ, կամ կուղարկեն կամ կփոխանցեն անհատին այլ հիվանդանոց, եթե այդ փոխանցումը համապատասխանի 42 C.F.R 482.55 օրենքին: Providence-ը թույլ չի տալիս ցանկացած գործողություն, ընդունելության պրակտիկա կամ կանոն, որը խոչընդոտում է մարդկանց ստանալ շտապ բուժօգնություն, ինչպիսիք են՝ պարտքերի հավաքագրման գործողությունները, որոնք խանգարում են շտապ բժշկական օգնության տրամադրմանը:

Providence-ի ՖՕՔ-ին ենթարկվող ծառայություն մատուցողների ցանկը. Յուրաքանչյուր Providence հիվանդանոց մասնավորապես կնշի ծառայություն մատուցող բժիշկների, բժշկական խմբերի կամ այլ մասնագետների ցուցակը, ովքեր ենթարկվում են և ովքեր չեն ենթարկվում այս քաղաքականությանը: Շտապ բժշկական օգնության բաժանմունքի բժիշկները, ովքեր մատուցում են շտապ բժշկական ծառայություններ հիվանդներին Կալիֆոռնիայի Providence հիվանդանոցներում, պետք է Կալիֆոռնիա նահանգի օրենսդրության համաձայն տրամադրեն զեղչեր չապահովագրված կամ բարձր բժշկական ծախսերով հիվանդներին (ինչպես նշված է Կալիֆոռնիայի Առողջապահության և անվտանգության օրենսգրքի (Բաժիններ 127400-127446) Հիվանդանոցի կիրառելի գնային քաղաքականության մեջ), որոնց աղքատության մակարդակը հավասար կամ ցածր է դաշնային աղքատության մակարդակի (FPL) 350%-ից: Providence-ի յուրաքանչյուր հիվանդանոց այս ցանկը պետք է տրամադրի ցանկացած հիվանդի, ով պահանջում է պատճեն: Ծառայություն մատուցողների ցանկը կարող էք նաև գտնել Providence-ի վեբկայքերում. www.providence.org.

Ֆինանսական օժանդակության իրավասության պահանջները. Ֆինանսական օժանդակությունը հասանելի է ինչպես ապահովագրություն չունեցող, այնպես էլ ունեցող հիվանդներին և երաշխավորողներին, եթե այդ օգնությունը համապատասխանում է սույն քաղաքականությանը և դաշնային ու նահանգային օրենքներին, որոնք կարգավորում են հիվանդներին տրամադրվող թույլատրելի նպաստները: Providence հիվանդանոցները ողջամիտ ջանքեր կգործադրեն իմանալու համար որևէ երրորդ կողմի ապահովագրության ատկայության կամ դրա բացակայության մասին, որը կարող է ամբողջությամբ կամ մասամբ հասանելի լինել Providence հիվանդանոցների կողմից մատուցված ծառայությունների համար՝ մինչև հիվանդի նկատմամբ գանձման գործողություններ նախաձեռնելը:

Ֆինանսական օժանդակության համար դիմող հիվանդները պետք է լրացնեն Providence-ի Ֆինանսական օժանդակության ստանդարտ դիմումը, և իրավասությունը կհիմնվի այդ պահի դրությամբ ֆինանսական կարիքի վրա: Ողջամիտ ջանքեր կգործադրվեն Ֆինանսական օժանդակության մասին հիվանդներին ծանուցելու և տեղեկացնելու համար՝ տեղեկատվություն տրամադրելով ընդունելության և հիվանդանոցից դուրս գրման ընթացքում, հիվանդի հաշիվների ներկայացման քաղվածքի մեջ, հիվանդի համար հասանելի հաշիվների ներկայացման վայրերում, Providence-ի հիվանդանոցի կայքում, վճարման քննարկումների ընթացքում բանավոր ծանուցման միջոցով, ինչպես նաև ծանրաբեռնված ստացիոնար և ամբուլատոր կետերում, օրինակ՝ ընդունելության և շտապ օգնության բաժիններում: Providence-ը իրավասությունը սահմանող տեղեկությունները կպահպանի համաձայն իր արձանագրությունների պահպանման կանոնների:

Ինչպես դիմել Ֆինանսական օժանդակության համար. Հիվանդները կամ երաշխավորողները կարող են ներկայացնել Ֆինանսական օժանդակության դիմումը, որն անվճար է և հասանելի է Providence-ի նախարարությունում կամ հետևյալ կերպ. տեղեկացնելով ֆինանսական ծառայությունների աշխատակազմին հիվանդանոցից դուրս գրվելու պահին կամ մինչև այդ, այն մասին, որ դիմել են օգնության համար և ներկայացրել են լրացված փաստաթղթերը փոստով կամ այցելելով www.providence.org կայք և ներբեռնել ու ներկայացրել են լրացված դիմումը փաստաթղթերի հետ մեկտեղ: Ֆինանսական օժանդակության համար դիմող անձը կանցնի նախնական ստուգում, այդ թվում նաև կստուգվի՝ արդյոք նա սպառել է կամ իրավասու չէ որևէ երրորդ կողմի վճարման աղբյուրներից օգտվելու հնարավորության համար:

Providence-ի յուրաքանչյուր հիվանդանոց պետք է ունենա հատուկ նախատեսված անձնակազմ, որը պետք է պատրաստ լինի օգնելու հիվանդներին լրացնել Ֆինանսական օժանդակության դիմումը և սահմանի Providence-ի կամ, առկայության դեպքում, պետության կողմից ֆինանսավորվող ապահովագրական ծրագրերի համար ֆինանսական օժանդակության իրավասությունը: Հարցերի և մտահոգությունների դեպքում, ինչպես նաև Ֆինանսական օժանդակության դիմումը լրացնելու հարցում օգնություն ստանալու համար տրամադրվում են թարգմանչական ծառայություններ:

Ֆինանսական օժանդակության համար իրավասությունը ստուգող հիվանդը կամ երաշխավորողը կարող է ցանկացած պահի տրամադրել համապատասխան փաստաթղթերը Providence-ին, երբ պարզ դառնա, որ կողմի եկամուտը ցածր է նվազագույն FPL-ից՝ համաձայն Դաշնային և նահանգային համապատասխան կանոնակարգումների:

Անհատական ֆինանսական վիճակ. Հիվանդի եկամտի, դրամական հիմնական միջոցների և ծախսերի մասին տեղեկությունները կօգտագործվեն հիվանդի անհատական ֆինանսական վիճակը գնահատելու համար: Դրամական հիմնական միջոցները չպետք է ներառեն թոշակառության կամ Ներքին եկամուտների օրենքի շրջանակներում որակավորված կամ չորակավորված հետաձգված փոխհատուցումների ծրագրերը:

Եկամտի որակավորումները. Եկամտի չափանիշների հիման վրա՝ ըստ Դաշնային աղքատության մակարդակի (FPL), կորոշվի անվճար կամ գեղչված սակագներով բուժօգնության իրավասությունը: Մանրամասների համար ծանոթացեք Հավելված Բ-ին:

Որոշումները և հաստատումները. ՖՕԲ-ի իրավասության մասին ծանուցումը հիվանդները կստանան Ֆինանսական օժանդակության լրացված դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: Դիմումը ստանալուց հետո արտահերթ գանձման աշխատանքները կդադարեցվեն մինչև իրավասության գրավոր որոշումը կուղարկվի հիվանդին: Հիվանդանոցը չի կայացնի օգնության իրավասության որոշումը՝ հիմնվելով այնպիսի տեղեկությունների վրա, որոնք վերջինիս կարծիքով սխալ կամ անվստահելի են:

Վիճաբանությունների լուծումը. Հիվանդը կարող է բողոքարկել ֆինանսական օժանդակության համար անիրավունակ ճանաչելու որոշումը՝ Providence-ին տրամադրելով համապատասխան լրացուցիչ փաստաթղթեր՝ մերժման ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Բոլոր դիմումները պետք է վերանայվեն, և եթե վերանայման որոշումը հաստատի մերժումը, երաշխավորողին ու Առողջապահության նահանգային վարչությանը, անհրաժեշտության դեպքում, պետք է ուղարկվի գրավոր ծանուցում՝ օրենքի համաձայն: Վերջնական բողոքարկման գործընթացը պետք է ավարտվի Providence-ի մերժումը դիմողի կողմից ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Բողոքարկումը կարող է ուղարկվել Providence Regional Business Office, P.O. Box 3268, Portland, OR 97208-3395 հասցեով:

Հաստատագրված բարեգործություն. Providence-ը կարող է հավանություն տալ հիվանդին իր հաշվի մնացորդի բարեգործական կարգավորման համար այլ միջոցներով՝ բացի Ֆինանսական օժանդակության դիմումից: Այդպիսի որոշումները կկայացվեն հաստատագրված հիմքերով՝ օգտագործելով տվյալ ոլորտում տարածված ֆինանսական գնահատման գործիքը, որը գնահատում է վճարունակությունը ըստ հանրորեն հասանելի ֆինանսական կամ այլ արձանագրությունների, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ընտանիքի եկամուտը, ընտանիքի չափը և վարկային ու վճարումների պատմությունը:

Այլ հատուկ հանգամանքներ. FPL-որակավորում ունեցող ծրագրերի, ինչպիսիք են՝ Medicaid-ը, Medi-Cal-ը և պետության կողմից հովանավորվող ցածր եկամուտներ ունեցող խավին աջակցող այլ ծրագրերի համար իրավասու հիվանդները համարվում են կարիքավոր: Ուստի, այդպիսի հիվանդները իրավասու են Ֆինանսական օժանդակության համար, երբ ծրագրերը մերժում են վճարումը, ապա կատարում հիվանդի հաշվի մեջ ներկայացված գանձումներ: Այն հիվանդների հաշվի մնացորդները, որոնք առաջացել են չփոխհատուցվող ծախսերի հետևանքով, կարող են ամբողջությամբ դուրս գրվել բարեգործական ֆոնդերից: Իրավասու ծախսերի մեջ կոնկրետ ներառված են հետևյալ կետերի հետ կապված ծախսերը.

- Ստացիոնարում մնալու մերժումը
- Ստացիոնարում մնալու մերժված օրերը
- Չապահովագրվող ծառայությունները
- Բուժման իրավագործման հայցի (TAR) մերժումները
- Սահմանափակ ապահովագրության պատճառով մերժումները

Չափազանց շատ բժշկական ծախսերը. Չափազանց շատ բժշկական ծախսերի դեպքում Providence-ը իր հայեցողությամբ կարող է բարեգործություն տրամադրել: Այսպիսի հիվանդներին կցուցադրվի անհատական մոտեցում:

Արտակարգ իրավիճակների ժամերը. Ֆինանսական աջակցությունը կարող է տրամադրվել Պրովիդենսի հայեցողությամբ ազգային կամ պետական արտակարգ իրավիճակների ժամանակ՝ անկախ աղետալի ծախսերի համար օգնությունից:

Ֆինանսական օժանդակության համար իրավունակ բոլոր հիվանդների վճարումների հետ կապված սահմանափակումները. Վերոնշյալ օգնության անվանակարգերի համար իրավունակ ոչ մի հիվանդ անձամբ պատասխանատվություն չի կրի համախառն վճարումների «Հիմնականում հաշվով ներկայացվող վճարումների» (AGB) տոկոսը գերազանցող գումարների համար, ինչպես սահմանված է ստորև:

Ողջամիտ վճարային պլան. Եթե հիվանդը հաստատվում է մասնակի ֆինանսական օժանդակության համար, բայց դեռ մնացորդային պարտք ունի, Providence-ը կքննարկի վճարային պլանի կազմակերպումը: Ողջամիտ վճարային պլանը կազմված է լինելու ամսական վճարումներից, որոնք չեն գերազանցելու հիվանդի կամ իր ընտանիքի ամսական եկամտի 10 տոկոսը, հանած ապրուստի համար նշանակալի ծախսերը: Վճարային պլանները միջնորդավճար չեն ունենալու: Վճարային պլանների ժամկետները կերկարաձգվեն այն հիվանդների համար, ում ապահովագրության դիմումները առկա չեն:

Հաշիվների ներկայացում և գանձման գործունեություններ. Հիվանդների կամ երաշխավորողների կողմից չվճարված գումարները, որոնք կուտակվել են կիրառված զեղչերից հետո, եթե կան այդպիսիք, կարող են ուղղվել գանձման գործադիր մարմիններին: Չվճարված հաշվի մնացորդների ուղղությամբ տարվող գանձումների գործունեությունների հետևանքով կդադարեցվի ՖՕՔ-ի իրավասության վերջնական որոշումը: Providence-ը թույլ չի տալիս, չի կատարում և ոչ էլ թույլ է տալիս գանձումների գործակալություններին կատարել արտահերթ գանձման աշխատանքներ մինչև. (ա) ողջամիտ քայլեր ձեռնարկելը՝ որոշելու համար արդյոք հիվանդը իրավասու է ֆինանսական օժանդակության համար, կամ (բ) հիվանդի առաջին քաղվածքն ուղարկելուց 120 օր հետո: Հիվանդի կողմից չվճարված գումարների գանձումների և Providence-ի հաշիվների ներկայացման վերաբերյալ տեղեկությունների համար ծանոթացեք Providence-ի հիվանդանոցի քաղաքականությանը, որն անվճար տրամադրվում է Providence-ի հիվանդանոցի ընդունարանում կամ հետևյալ կայքում՝ www.providence.org.

Հիվանդի փոխհատուցումներ. Եթե հանկարծ հիվանդը կամ երաշխավորողը վճարում է կատարել ծառայությունների դիմաց, հետո իմացել է, որ իրավասու է անվճար կամ զեղչված բուժօգնության համար, ՖՕՔ-ի իրավասության ժամկետում մատուցված ծառայությունների հետ կապված բոլոր վճարումները, որոնք գերազանցում են պարտադիր վճարը, կփոխհատուցվեն՝ համաձայն նահանգային կանոնակարգումների:

Տարեկան վերանայում. Providence-ի սույն Ֆինանսական օժանդակության (բարեգործական հսկողության) քաղաքականությունը կվերանայվի Եկամուտների փաստաթղթաշրջանառության բաժնի ղեկավարության կողմից տարեկան կտրվածքով:

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Տես շրջանակները վերևում:

ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.

Սույն քաղաքականության նպատակների համար կիրառվում են հետևյալ սահմանումները և պահանջները.

1. Դաշնային աղքատության մակարդակ (FPL). FPL նշանակում է աղքատության ցուցանիշը, որը պարբերաբար թարմացվում է Դաշնային ռեգիստրում Միացյալ Նահանգների Առողջապահության և սոցապահովման վարչության կողմից:
2. Հիմնականում հաշվով ներկայացվող վճարումներ (AGB). Շտապ օգնության և այլ բժշկական անհրաժեշտ ծառայությունների համար հիմնականում հաշվով հիվանդներին ներկայացվող վճարումները, ովքեր ունեն առողջական ապահովագրություն, այս քաղաքականության մեջ կոչվում է AGB: Providence-ը որոշում է կիրառելի AGB-ի տոկոսը յուրաքանչյուր Providence-ի հիվանդանոցի համար՝ բազմապատկելով ցանկացած անհետաձգելի կամ այլ բժշկական տեսանկյունից կարևոր ծառայությունների դիմաց հիվանդանոցի համախառն ծախսերը ֆիքսված տոկոսադրույքով, որը հիմնվում է Medicare-ով թույլատրելի հայցերի վրա: Յուրաքանչյուր Providence հիվանդանոցի համար AGB-ի տոկոսների և նրանց հաշվարկման եղանակների վերաբերյալ տեղեկատվական թերթիկները կարող եք գտնել հետևյալ վեբկայքում. www.providence.org կամ գանգահարելով 1-866-747-2455 հեռախոսահամարով և խնդրելով թերթիկի պատճեն:

3. Արտահերթ գանձման գործողություն (ECA). ECA-ը այն գործողություններն են, որոնց համար պահանջվում է իրավական կամ դատական գործընթաց, որի մեջ մտնում է պարտքը մեկ այլ կողմին վաճառելու գործընթացը կամ բացասական տեղեկությունները վարկային կազմակերպություններին կամ բյուրոներին հայտնելը: Այս նպատակի համար կիրառվող գործողությունները, որոնց համար պահանջվում է իրավական կամ դատական գործընթաց, հետևյալն են՝ գույքի կալանադրումը, անշարժ գույքի նկատմամբ գրավագրությունը, բանկային հաշվի կամ այլ անձնական գույքի կցումը կամ բռնագրավումը, անհատի նկատմամբ քաղաքացիական հայցի հարուցումը, անհատի կալանքի գործողությունները, գործողություններ, որոնք առաջացնում են անհատին ենթակա մարմնի կցվածությունը, և աշխատավարձի կալանադրումը:

4. Չափազանց շատ բժշկական ծախսեր. Չափազանց շատ բժշկական ծախսերը սահմանված են Առողջապահության և անվտանգության օրենսգրքի (Բաժիններ 127400-127446) Հիվանդանոցի կիրառելի գնային քաղաքականության մեջ. (1) անհատի կողմից Providence հիվանդանոցում կատարած տարեկան կտրվածքով սեփական ծախսերը, որոնք գերազանցում են հիվանդի ընտանիքի վերջին 12 ամիսների ընթացքում ունեցած եկամտի 10 տոկոսը, (2) անհատի կողմից կատարած տարեկան կտրվածքով սեփական ծախսերը, որոնք գերազանցում են հիվանդի ընտանիքի եկամտի 10 տոկոսը, եթե հիվանդը տրամադրում է իր կամ իր ընտանիքի կողմից վերջին 12 ամիսների ընթացքում կատարած բժշկական ծախսերի փաստաթղթերը, կամ (3) Providence հիվանդանոցի կողմից կայացրած ցածր մակարդակի վերաբերյալ որոշումը՝ համաձայն Providence հիվանդանոցի բարեգործական հսկողության քաղաքականության:

ՏԵՂԵԿՍՏՈՒ ՆՅՈՒԹԵՐ.

<i>Ներքին եկամուտների մասին օրենսգրքի բաժին 501(r); 26 C.F.R. 1.501(r)(1) – 1.501(r)(7)</i>
<i>Կալիֆոռնիայի Առողջապահության և անվտանգության օրենսգրքի բաժին 127000 -127446</i>
<i>Շտապ բուժօգնության և աշխատանքի մասին օրենքի բաժիններ (EMTALA), 42 U.S.C. 1395dd 42 C.F.R. 482.55 և 413.89</i>
<i>Հիվանդանոցների ամերիկյան ընկերակցության ուղեցույցներ բարեգործության վերաբերյալ</i>
<i>Կալիֆոռնիայի հիվանդանոցների միության ուղեցույցներ բարեգործության վերաբերյալ</i>
<i>Կալիֆոռնիայի կաթոլիկ բուժսպասարկման միության ուղեցույցներ բարեգործական ծառայությունների վերաբերյալ</i>
<i>Providence-ի ուղեցույցները՝ ապահովագրություն չունեցող անձանց նկատմամբ հանձնառությունների մասին</i>
<i>Ծառայություն մատուցողի փոխհատուցման ձեռնարկի, մաս I, գլուխ 3, բաժին 312</i>

Հավելված Ա – Ընդգրկված հաստատությունների ցանկ

Հարավային Կալիֆոռնիայի Providence հիվանդանոցներ	
Providence Saint Joseph բժշկական կենտրոն	Providence Holy Cross բժշկական կենտրոն
Providence Little Company of Mary բժշկական կենտրոն Սան Պեդրո	Providence Saint John-ի առողջապահական կենտրոն
Providence Cedars-Sinai Tarzana բժշկական կենտրոն	Providence Little Company of Mary բժշկական կենտրոն Տոռանս

Հավելված Բ – Հարավային Կալիֆոռնիայի Providence հիվանդանոցների համար ներկայացվող եկամուտները հաստատող փաստաթղթեր

Եթե...	Ապա...
<p>Ընտանիքի տարեկան եկամուտը՝ ըստ ընտանիքի չափի, հավասար կամ ցածր է ընթացիկ FPL-ի ցուցանիշից 300%-ով,</p>	<p>Հիվանդը համարվում է ֆինանսապես կարիքավոր և իրավասու է ֆինանսական օժանդակության 100% դուրս գրման հիվանդի պատասխանատու գումարներից:</p>
<p>Ընտանիքի տարեկան եկամուտը՝ ըստ ընտանիքի չափի, կազմում է ընթացիկ FPL-ի ցուցանիշի 301% - ից 350%,</p>	<p>Հիվանդը իրավասու է հիվանդի պատասխանատու գումարների նախնական վճարման 75% զեղչի:</p>
<p>Եթե ընտանիքի տարեկան եկամուտը՝ ըստ ընտանիքի չափի, հավասար կամ ցածր է FPL-ի 350%-ից ԵՎ հիվանդի կողմից Providence հիվանդանոցներում վերջին 12 ամիսների ընթացքում կատարած բժշկական ծախսերը գերազանցում են նրա ընտանիքի եկամտի 20%-ը՝ ըստ ընտանիքի չափի, սույն քաղաքականության մեջ նշված ծառայությունների համար,</p>	<p>Հիվանդը իրավասու է հիվանդի պատասխանատու գումարների վճարման 100% բարեգործական նպաստի:</p>